Հարցարան

(Վ. Սարոյան «մարդկային կատակերգություն»)

Կազմեց Մարիետ Սիմոնյանը

Սիմոնյան Մարիետ
Հարցարան (Վ.Սարոյան «Մարդկային կատակերգություն»).- Եր.: Շաղիկ, 1993.- 59 էջ:

© «Շաղիկ» հրատարակչություն, 1993

Գլուխ 1

ՅՈՒԼԻՍԻՍ

1. Նկարագրեք Յուլիսիսենց տունը և բակը:
2. Նկարագրեք Յուլիսիսին:
3. Ինչո՞ւ նեգրը պատասխանեց տղայի ողջույնին:
4. Հորինեք փոքրիկ պատմություն նեգրի մասին:
5. ***Մերունին նայեց Յուլիսիսին այնպես, կարծես ինքն էլ, տղան էլ վաղուց մեռած լինեին:***

Մեկ բառով ինչպե՞ս կանվանեք այդ հայացքը:

6. Այս գլխում ո՞ր բառն է ընդգծված: Ինչո՞ւ:
7. Ուրիշ ի՞նչ բառեր կընդգծեք: Ինչո՞ւ:
8. ***Խլուրդը խոնավ, թարմ հողը դուրս հրեց և աչքի տակով նայեց տղային, որը, իհարկե, անծանոթ էր, բայց գույնեն թշնամի չէր:***

ա) Բոլո՞ր անծանոթներն են թշնամի:

բ) Բոլո՞ր թշնամիներն են անծանոթ:

գ) Բոլո՞ր ծանոթներն են բարեկամ:

դ) Բոլո՞ր բարեկամներն են ծանոթ:

Գրավոր աշխատանք.

Տունը, որտեղ ես ապրում եմ

Գլուխ 2

ՀՈՄԵՐ

1. Քննարկեք հետևյալ կյուցանակը.

Բթաբա, Կալիֆոռնիա:

Ուր ուզում ես գնա, մնիկ լավ տեղ չկա.

Բարի զալուստ, օտարական:

2. Հովհ. Թումանյանի ո՞ր բանաստեղծության հետ կհամեմատեք այս յուցանակը:

3. Համեմատեք հետևյալ երկու պատկերները և ձևակերպեք հարցը.

ա) Նա ողջունեց նաև գնացքի մեջ եղող ուրիշ հինգ հոգու, բայց նրանցից ոչ մեկը չպատասխանեց տղայի ողջույնին: Նրանք կարող էին այդ անել, բայց չարեցին: (Գլուխ 1):

բ) *Բազմաթիվ վինվորներ պատասխանեցին երիչի ողջույնին: Եվ ինչո՞ւ չպատասխանեին: Ի՞նչ ունեին կորցնելու ...*

Բառային աշխատանք.

1. *Արևը մայր էր մտնում երեկոյան* քնկոտ *խաղաղությամբ ...*

ա) Ընդգծված պատկերը ներկայացրեք այլ բառով կամ բառակապակցությամբ:

բ) Կազմեք նոր բառակապակցություններ *քնկոտ* բառով:

2. *...Պողպատու և խաղողի այգիներ՝ ծուլորեն փրոված...*

ա) Ո՞ր բառով կփոխարինեիք *ծուլորեն* բառը, որ պատկերը չփոխվի:

բ) Կազմեք նոր պատկերներ՝ օգտագործելով *ծուլորեն փռված* բառակապակցությունը:

3. Ի՞նչ տարբերություն եք տեսնում հետևյալ երկու արտահայտությունների միջև.

ա) մի փոքր, սառը առվակ,

բ) մի փոքր սառը առվակ:

Ինքներդ կազմեք նման օրինակներ:

Գլուխ 3

ՀԵՌԱԳՐԱՏՈՒՆԸ

1. *Այդ հեռագիրը հենց նոր նրան էր հանձնել հոգնած տեսքով, քսան տարեկանի մոտ մի հուզված երիտասարդ:*

Նկարագրեք *հոգնած տեսքով* երիտասարդին:

2. Բարձրաձայն կարդացեք միստր Սփանգլերի և երիտասարդի զրույցը: Մանրամասն քննարկեք:

3. Գրեք որևէ հեռագիր և հաշվեք բառերը:

Գնահատեք մեկ բառը և հաշվեք հեռագրի արժեքը:

4. *...Ուզում եմ տուն գալ. լավ եմ, ամեն ինչ կարգին է:*

Առաջին և երկրորդ գլուխներից դուրս գրեք այս տողերին իմաստով մոտ տողեր:

5.. *...Յոթ օր առաջ գինետնից վերցրի ու գրպանս դրեցի. երջանկություն է բերում:*

Սնահավատության ուրիշ ի՞նչ օրինակներ գիտեք:

6. Ինչպե՞ս եք հասկանում հետևյալ միտքը.

Այդքան արագ մի՛ գնա, շուտ տեղ հասիր, բայց շատ արագ մի՛ գնա:

7. *Քաղաքավարի եղիր բոլորի հետ. վերելակի մեջ գլխարկդ հանիր:*

Քաղաքավարության ի՞նչ կանոններ գիտեք:

8. *Բնկնիչ մեծ ուրբանկատություն է պահանջվում, մի բան, որ չի կարելի ապահել տասներկու տարեկանից բարձր մարդկանցից:*

Համամի՞տ եք միստր Գրոգանի հետ: Ի՞նչ եք մտածում դուք մեծերի մասին:

9. Ինչպե՞ս եք հասկանում հետևյալ միտքը.

Շուրջդ ամբողջ երաժշտություն է, իսկական երաժշտություն, հենց կյանքիդ հկող, մարդկանց սրտիդ բխող երաժշտություն:

10. Նկարագրեք Վիլյամ Գրոգանի արտաքինը:

Բառային աշխատանք.

1. Ի՞նչ է նշանակում *ալկոհոլի գիրկն ընկնել* դարձվածքը: Գրեք նոր դարձվածքներ *գիրկն ընկնել* բառակապակցությամբ:

2. Բացատրեք *երանության մեջ լինել* արտահայտությունը: Նկարագրեք փոքրիկ պատկեր, որտեղ ինչ-որ մեկը երանության մեջ է:

3. Բացատրեք *աչքերն ու ականջները բաց անել* դարձվածքը: Այս արտահայտությունն օգտագործեք ուղիղ և դարձվածքային իմաստներով:

4. ***Հոսերը վերջին հետագիրը, դրել ծրարի մեջ, կնքել, ծրարը դրել գլխարկի մեջ և գրասենյակից դուրս եկավ:***

Փոխեք ստորակետերի տեղերը բոլոր հնարավոր տարբերակներով և ցույց տվեք իմաստային տարբերությունները:

Գրավոր աշխատանք.

Մոլորակ, որտեղ քաղաքավարության ոչ մի կանոն չի գործում

Կուզեի ապագայում ինչ-որ բան դառնալ

Մեծահասակ, որը այնքան էլ մեծահասակ չէ

Գլուխ 4

ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀԸ ԿՆԱԽԱՆՁԻ ԻՆՁ

1. Ինչպե՞ս եք հասկանում հետևյալ տողերը.

Բայց քանի դեռ մենք ապրում ենք, քանի դեռ միասին ենք, քանի դեռ մեկնիկ թեկուզ երկուսը կան և հիշում են նրան, աշխարհում ոչ մի բան չի կարող խլել նրան մեկնիկ: Մարմինը միայն կարող են խլել, բայց ոչ նրան: Դուք ձեր հորը ավելի լավ կճանաչեք, երբ մեծանաք և ինքներդ ձեզ ավելի լավ ճանաչեք: Նա մեռած չէ, որովհետև դուք ողջ եք: Ժամանակը և պատահականությունը, հիվանդությունն ու հոգնությունը նրա մարմինը տարան, բայց դուք նրան արդեն վերադարձրել եք ավելի երիտասարդ և ավելի կենսունակ:

2. Քննարկեք հետևյալ հատվածը.

Չեմ կասկածում, որ ասածներիդ շատ բան հավակատ, բայց գիտեմ, որ այս մեկը պիտի հիշեք բարին երբեք չի մահանում: Եթե մահանար, աշխարհում մարդիկ գոյություն չէին ունենա, ոչ մի տեղ կյանք չէր լինի: Իսկ աշխարհը լեցուն է մարդկանցով և հրաշալի կյանքով:

3. Ինչպե՞ս եք հասկանում հետևյալ հատվածը.

Գետնի տակի խլուրդները, երկնքի թռչունները, ծովի ձկները, բոլորը կյանքի մասն են, մեր կյանքի մասը: Ապրող ամեն ինչ մեկնիկ յուրաքանչյուրի մասն է, ինչպես նաև հողը, երկինքը, աստղերը և օվկիանոսները: Այդ ամենը մեր մասն են, և մենք ստեղծվել ենք, որպեսզի դրանք վայելենք և դրանց համար Աստծուն շնորհակալ լինենք:

4. *Ի՞նչ է աշխատանքը: Ինչո՞ւ է եղբայրը աշխատում: Ի՞նչ հաճույք է մարդ ստանում աշխատելուց:*

Ի՞նչ կպատասխանեք Յուլիսիսին:

5. Մեկնաբանեք հետևյալ երկխոսությունը.

- Քո Հոմեր եղբայրը աշխատում է, որովհետև իր Մարկուս եղբայրը բանակում է: Որովհետև մենք պետք է փող ունենանք, որ կարողանանք մթերք և հագուստ գնել, տան վարձ վճարել և օգնել ուրիշներին, ովքեր մեկնիկ ավելի կարիքավոր են:

- Ո՛ւմ,- հարցրեց Յուլիսիսը:

- Որևէ մեկին,- ասաց միսիս Մաքոլին,- աղքատին, օրինակ:

- Ո՛վ է աղքատը,- հարցրեց տղան:

- Բոլորը,- պատասխանեց միսիս Մաքոլին ինքն իրեն ժպտալով:

6. Քննարկեք միսիս Մաքոլիի խոսքերը.

Հիշեցե՛ք, ձեր ունեցած ամեն ինչից պետք է բաժին հանեք ուրիշներին: Դուք պետք է տաք նույնիսկ, երբ թվում է, թե տալը խնդություն է: Այդ ժամանակ ոչ ոք և ոչ մի բան ձեզ խաբելու ուժ չի ունենա, որովհետև եթե գողին տաք, նա ձեզնից չի գողանա և արդեն գող չի լինի: Եվ ինչքան շատ տաք, այնքան ավելի շատ բան կունենաք տալու համար:

ա) Այս միտքը Նոր Կտակարանի ո՞ր մտքի հետ կարող եք համեմատել:

բ) Հովհ. Թումանյանի ո՞ր բանաստեղծության հետ կարող եք համեմատել:

7. Բարձրաձայն կարդացեք և քննարկեք Մաթյու Մաքոլիի և միսիս Մաքոլիի երկխոսությունը:

Գրավոր աշխատանք.

Ինչո՞վ եմ նման հայրիկիս կամ մայրիկիս

Միտք, որի շուրջ սկսեցի խորհել

Գլուխ 5

ԴՈՒ ՔՈ ՃԱՆԱՊԱՐՀՈՒՆ ԳՆԱ, ԵՍ՝ ԻՄ

1. Ինչու՞ էր կինը հետաձգում հեռագրի կարդալը:

2. Բացատրեք հետևյալ հատվածը.

Չգիտես ինչու, այդ բոլորից տղան վիրավորվեց, ամբողջ հոգով դառնացավ և ցցաց, որ ուզում է սիրտը ետ տալ: Նա այդ կնոջից կամ որևէ մեկից չէր ցցվում, բայց այն, ինչ կատարվում էր այդ կնոջ հետ, այնքան սխալ էր թվում և ազգ, որ ինքը վատ էր զգում և չէր կարողանում որոշել, թե արժե՞ր արդյոք այլևս ապրել:

3. Ինչպե՞ս եք հասկանում հետևյալ հատվածը.

Թեև գրիչը վատ էր զգում իրեն, բայց շարժվել չէր կարողանում: Նա ոչ ուժ էր զգում, ոչ ատելություն, նրան հանձնել էր ցցվանքի նման մի բան, բայց միևնույն ժամանակ մեծ կարեկցանք. կարեկցանք ոչ միայն այդ խեղճ կնոջ, այլ ամեն ինչի նկատմամբ:

4. Բացատրեք հետևյալ հատվածը.

Երբ հեռագրատուն հասավ, արցունքներն արդեն չորացել էին, բայց հոգում ծնունդ էին առել նոր բաներ, և տղան զգում էր, որ դրանք անհնարին է կասեցնել. «Եվ պետք էլ չէ, այլապես ևս նույնպես մեռած կլինեմ»,- բղավեց նա այնպես, կարծես խուլի հետ խոսելիս լիներ:

5. Նկարագրեք միսիս Սանդովալին:

6. Ինչո՞ւ էր կինը հետաձգում հեռագրի կարդալը:

7. Կարո՞ղ է որդեկորույս կինը այդպես պահել իրեն, ձեր կարծիքով:

8. Դուրս գրեք առավել ողբերգական հատվածը:

9. Ինչո՞ւ է գլուխն այդպես վերնագրված:

10. Ինչպե՞ս կվերնագրեք դուք:

Բառային աշխատանք.

Բացատրեք *հոգով դառնանալ, գծի նման սուրալ* դարձվածքները:

Գրեք նոր դարձվածքներ *հոգի* բառով, *գծի նման* արտահայտությամբ:

Գլուխ 6

ԵՐԳ ՄԻՍՏՐ ԳՐՈԳԱՆԻ ՀԱՄԱՐ

1. - *Արդեն քանի տարի է ուզում են ինձ թոշակի ուղարկել,- բղավեց նա,- ուզում են իմ փոխարեն մեքենաներ դնել: Բացմայնողներ և հեռագրամեքենաներ,- ասաց նա աքհամարհանքով,- մեքենաներ մարդկանց փոխարեն ...*

Վա՞տ է մարդկանց փոխարեն մեքենաներ ունենալը: Ինչո՞ւ:

2. Ճի՞շտ էր անում Հոմերը, որ օգնում էր հարբած Գրոգանին: Ինչո՞ւ:

3. Մեկնաբանեք հետևյալ հատվածը.

Նա լռեց և ժպտաց ցրիչին, քաղաքի անքատ ու կեղտոտ փողոցներից եկած այն տղային, որ անցյալ գիշեր և ճիշտ ժամանակին էր աշխատանքի ընդունվել:

- *Մի ուրիշ երգ էլ երգիր, փոքրիկ,- ասաց նա,- որովհետև դու և ես դեռևս ողջ ենք:*

Հոմերն անմիջապես սկսեց երգել:

4. Ճշտեք կետադրությունը.

- *Ճիշտ այդպես,- տղաս,- ասաց նա,- մի մտահոգվիր, մի վախեցիր, ճիշտ այդպես պետք է անել:*

Գրավոր աշխատանք. Իմ ռոբոտ-ուսուցիչը

Մոլորակ, որտեղ սպասարկում են միայն մեքենաները

Գլուխ 7

ԵԹԵ ՄԻ ԼՈՒՐ ԳԱ

1. Քննարկեք հետևյալ հատվածը.

- *Չգիտեմ աշխարհում ինչ է կատարվում,- շարունակեց տղան,- կամ ինչո՞ւ է կատարվում, բայց ինչ էլ որ պատահի, թույլ մի տուր, որ որևէ բան քեզ այդպես վիրավորի: Ամեն ինչ փոխված է, բայց թույլ մի տուր, որ մեզ համար այդքան շատ փոխվի:*

2. Մեկնաբանեք հետևյալ հատվածը.

Մենությունն ու թախիծը, որ դու զգում ես, այն պատճառով է, որ այլևս երեխա չես: Բայց ամբողջ աշխարհը միշտ լեցուն է եղել այդ մենությամբ ու թախիծով: Մենությունը պատերազմից չէ: Պատերազմը չէ, որ այն ստեղծեց: Ընդհակառակը, մենությունից ու թախիծից առաջացավ պատերազմը: Ամեն ինչի մեջ գոյություն ունեցող հուսահատության զգացումն է այդ, Աստծո շնորհի պակասը...

Ի՞նչ եք հասկանում *Աստծո շնորհ* ասելով:

3. Քննարկեք.

Եթե ինձ էլ մի այդպիսի լուր գա, ինչպիսին

մեքսիկայի կնոջն է ակել այս գիշեր, ես կհավատամ դրա խոսքերին, բայց ոչ իմաստին: Լաց լինելու կարիք չեմ զգա, որովհետև գիտեմ, որ իմ որդուն մահ չկա:

Չորրորդ գլխի ո՞ր հատվածի հետ կհամեմատեք այս հատվածը:

4. Քննարկեք հետևյալ երկխոսությունը.

Հոներ -...Իսկ այս աշխատանքն ամենահրաշալի բանն է ու դրանից դպրոցը մի տեսակ անմիտ է դառնում:

Միսիս Մաքոլի - Անշուշտ, դպրոցները երեխաներին փողոցից կտրելու համար են միայն, բայց վաղ թե ուշ նրանք պիտի փողոց գնան, սիրեն կամ չսիրեն այն: Բնական է, որ հայրերն ու մայրերը իրենց երեխաների համար աշխարհից վախենան, բայց վախենալու բան չկա: Աշխարհը լեցուն է վախեցած փոքրիկ երեխաներով: Վախենալով, նրանք իրար են վախեցնում:

5. *...Դու փորձիր հասկանալ, փորձիր սիրել քեզ հանդիպած բոլոր մարդկանց:*

Նոր Կտակարանի ո՞ր մտքի հետ կհամեմատեք:

6. Այս գլխում ո՞ր բառերն են ընդգծված: Ինչո՞ւ:

7. Ուրիշ ի՞նչ բառեր կընդգծեք:

8. Ի՞նչ միտք կընդգծեք այս գլխում:

Բառային աշխատանք.

1. Լրացրեք այս շարքը և բացատրեք. *քնաա, պոչաա, զունաա, ...*

2. Ցույց տվեք բառերի ժխտական մասը: Ուրիշ ի՞նչ ժխտական մասնիկներ գիտեք: Գրեք բառեր այդ

մասնիկներով:

3. Բացատրեք *սիրտը կոտրվել* դարձվածքը:

4. Կազմեք նոր դարձվածքներ *սիրտ* բառով:

5. Կազմեք նոր դարձվածքներ *կոտրել* բառով:

Գլուխ 8

ՆԵՐԿԱ ԵՂԻՐ ՄԵՐ ՍԵՂԱՆԻՆ, ՈՎ. ՏԵՐ

1. Ի՞նչ է աղոթքը:

2. Ի՞նչ աղոթք գիտեք:

3. Ինչպե՞ս եք հասկանում *բոլոր դեպքերում ոգին է կարևոր* արտահայտությունը:

4. Նոր Կտակարանում ի՞նչ է ասվում աղոթքի և աղոթելու մասին:

5. Ինչպե՞ս եք հասկանում հետևյալ միտքը.

...Եթե դու չհավատաս, չես ապրի և ոչ մի տեղ չես կարողանա խնջույքի նստել, մի կողմ թողած դրախտը, նույնիսկ, եթե քո սեղանը լցված լինի ամենահրաշալի կերակուրներով: Հավատքն է ամեն ինչ հրաշալի դարձնողը:

6. Ի՞նչ է ասվում Նոր Կտակարանում հավատի մասին:

7.... *Ծվում է, որ միշտ չէ դպրոց գնալը, երբ Մարկուսը բանակում է, և աշխարհում իրար աչք են հանում:*

Համամի՞տ եք Մերիի հետ: Ինչո՞ւ:

8. Քննարկեք հետևյալ երկխոսությունը.

- Այդ ևս մարդը նորից գնացքի մեջ կլինի՛,- հարցրեց փոքրիկ տղան:

Միսիս Մաքոլին մի պահ մտածեց, հետո ասաց.

– *Այո:*

Բառային աշխատանք.

1. Օգտագործեք *իրար աչք հանել* արտահայտությունը դարձվածքային և ուղիղ իմաստներով:

2. Բացատրեք *աչքի ծայրով տեսնել* դարձվածքը:

3. Գրեք դարձվածքներ *աչք* բառով:

Գլուխ 9

ԱՅՍ ԿՈՂՄԵՐՈՒՄ ՊԵՏՔ Է ՈՐ ՃԱԳԱՐՆԵՐ ԼԻՆԵՆ

1. Նկարագրեք ծերունուն: Բնութագրեք նրան:

2. Ճի՞շտ էին վարվել, որ բացել էին ճագարանոցի դուռը: Ինչո՞ւ:

3. Գրեք Հոմերի և ծերունու նոր երկխոսություններ:

4. Բացատրեք *ամենևին տեղին չէր, և հետևաբար ծիծաղելի էր* արտահայտությունը: Նկարագրեք իրավիճակ, որտեղ օգտագործվի այդ արտահայտությունը:

5. Ինչո՞ւ է գլուխն այդպես վերնագրված:

6. Դուք ինչպե՞ս կվերնագրեք:

7. Փոխեք հետևյալ նախադասության կետադրությունը և ցույց տվեք իմաստային տարբերությունները.

Հոմերը կննկց ցանկապատը, դրա ետևի տարածությունը, առջևի ապատ մասը, հետո չափեց բարձրությունը, որը բավական բարձր էր:

Գրավոր աշխատանք. **Իմ սիրած կենդանին**

Գլուխ 10

ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

1. Ինչպե՞ս եք հասկանում հետևյալ միտքը.

– Ջոկեֆ, դու պետք է բարի լինես,– ասաց նա,– մանավանդ այն դեպքում, երբ դու իրավացի ես, իսկ ես՝ սխալ:

2. Համամի՞տ եք հետևյալ մտքի հետ: Ինչո՞ւ:

– Հին աշխարհի պատմությունը,– շարունակեց ուսուցչուհին,– ձեզ կարող է ձանձրալի և ավելորդ գիտություն թվալ մեր ժամանակներում, երբ հասարակության պատմության մեջ այնքան իրադարձություններ են տեղի ունենում, վաղուց ավարտված մի ուրիշ աշխարհի պատմությունը սովորելն ու հասկանալը կարող է անօգուտ թվալ: Բայց դա սխալ տպավորություն է: Մեզ համար շատ կարևոր է իմանալ ուրիշ ժամանակների, ուրիշ մշակույթների, ուրիշ ժողովուրդների և ուրիշ աշխարհների մասին:

3. *Հոմերը ամբողջ ժամանակ հիանում էր նրա մարմնի և ձայնի անհավատալի հրաշքով:*

Փորձեք ներկայացնել աղջկա գեղեցկությունը նույնքան հակիրճ արտահայտությամբ:

4. Համեմատեք աշակերտներին, ուսուցչին և դասը՝ մեր օրերի հետ:

5. Լեզվական ի՞նչ անհարթություն կա հետևյալ նախադասության մեջ.

Հելենը դանդաղկրկց ընթերցումը և դարձավ հին պատմության դասատուն:

6. Փորձեք ստեղծել մի կախարդական իրավիճակ, երբ

Հելենը հանկարծ դարձավ դասատուն՝ միսս Հիքսը:

Գրավոր աշխատանք.

Գաս, որի մասին կուզեի պատմել

Իմ մարզիչը

Գլուխ 11

ՃԱՌ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՔԹԻ ՄԱՍԻՆ

1. Դուրս գրեք դարձվածքները:

2. Գրեք դարձվածքներ քթի մասին:

3. Գրեք դարձվածքներ մարմնի մյուս մասերի մասին:

4. Գրեք ասացվածքներ, որտեղ գործածված են մարմնի մասերի անուններ:

5. Գրեք համանման մի ճառ մարմնի այլ անդամի մասին:

6. Ի՞նչ անհարթություն կա հետևյալ նախադասության մեջ.

Քթերը կարմիր են, մանուշակները՝ կապույտ: Այս դասարանը մեռած է, և շատ հավանաբար նաև դուք:

Գլուխ 12

ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՔՍԱՆ ՅԱՐԴ ԱՐԳԵԼԱՎԱԶՔԸ

1. Ի՞նչ եք հասկանում ***աշխարհի ամոր արարածներ, աշխարհի բալֆիլղներ*** ասելով:

2. Ինչպե՞ս եք հասկանում ***ամոր արարքներից բարձր կանգնել*** արտահայտությունը:

3.. ***Երբեք չէի մտածի, որ ուսուցիչները բոլոր մարդկանց նման են, նույնիսկ ավելի լավը:***

Դուք ի՞նչ եք մտածում ուսուցիչների մասին:

4. Բացատրեք.

Ես հետևում եմ աշակերտների հոգու աճին և ուրախանում եմ այդ աճի յուրաքանչյուր նոր փաստով:

5. Համամի՞տ եք միսս Հիքսի հետ: Ինչո՞ւ:

Չկնիկ մեկը լավ ու հարուստ ընտանիքից է, իսկ մյուսը լավ ու աղքատ ընտանիքից: Կյանքին հարմարվելը գուցե նրա համար ավելի դժվար լինի, բան քեզ համար: Դա շատ կարևոր է:

6. Ինչպե՞ս եք հասկանում հետևյալ մտքերը.

ա) Այս աշխարհում, ի վերջո, յուրաքանչյուր մարդ ուրիշներից և՛ լավ է, և՛ վատ ...

բ) Ես չեմ խաբվում ո՛չ բարեկիրթ և ոչ էլ վատ ձևերից: Ինձ հետաքրքրում է, թե իսկապես ի՞նչ կա այդ ձևի տակ...

7. Կարևորն այն է, որ նա մարդ լինի, ունենա սիրտ, սիրի ճշմարտությունն ու պատիվը, հարգի նրանց, ովքեր իրենից ցածր են գտնվում, և նրանց ովքեր իրենից բարձր են ...

ա) Ի՞նչ է նշանակում ***ցածր գտնվել:***

բ) Ի՞նչ է նշանակում ***բարձր գտնվել:***

8. ***Չկնիկ յուրաքանչյուրը իսկական մարդ կլինի այն ժամանակ, երբ հակառակ ձեր փոխադարձ չսիրելուն, կարողանաք իրար հարգել: Ահա թե ի՞նչ է նշանակում դաստիարակված լինել...***

ա) Համամի՞տ եք միսս Հիքսի հետ:

բ) Ի՞նչ է նշանակում դաստիարակված լինել, ձեր կարծիքով:

9. Ինչպե՞ս եք հասկանում հետևյալ հատվածը.

Աշխարհում, նախքան ոտքի կանգնելը, դեռ հաճախ կլսես այդ ծիծաղը: Ոչ միայն մարդկանց ծիծաղը, այլ նույնիսկ դառը ծիծաղը իրերի, որոնք պիտի փորձեն շփոթեցնել քեզ և շեղել ճանապարհից, բայց, ես վստահ եմ, ուշադրություն չես դարձնի այդ ծիծաղին:

10. Բնութագրեք Հյուբերդ Էբլիին:

ա) Մեղադրեք նրան:

բ) Արդարացրեք:

Ինչպիսի՞ն է հեղինակի վերաբերմունքը: Ցույց տվեք փաստերով:

11. Ձեզ համոզո՞ւմ են Բայֆիլդի արարքները:

ա) Մեղադրեք նրան:

բ) Արդարացրեք:

Ինչպիսի՞ն է հեղինակի վերաբերմունքը: Ցույց տվեք փաստերով:

12. *Ձեզ բազմիցս ասել եմ, որ մարդկանց հետ այդպես չվարվեք, նրանց այդ դուր չի գալիս...*

ա) Դուք գիտե՞ք, ինչպես պետք է վարվել մարդու հետ, որ նրան դուր գա:

բ) Ի՞նչ է ասված այդ մասին Նոր Կտակարանում:

Գրավոր աշխատանք.

Ո՞ր ուսուցչին կտանեի ինձ հետ, եթե գնայի այս դպրոցից:

Գլուխ 13

ԹԱԿԱՐԴԸ, ԱՍՏՎԱԾ ԻՄ, ԹԱԿԱՐԴԸ

1. Ինչպե՞ս վերաբերվեցին Ցուլիխիսի թակարդ ընկնելուն.

ա) միստր Քովինգտոնը,

բ) Մեծ Քրիսը,

գ) Հոմերը,

դ) Ցուլիխիսը,

ե) պատահական մարդիկ:

2. Բնութագրեք Մեծ Քրիսին:

3. Փորձեք վերականգնել Մեծ Քրիսի կյանքի մանրամասները:

4. Վիպակում ո՞ւմ հետ կարող էր բարեկամություն անել նա: Ինչո՞ւ:

5. Բնութագրեք միստր Քովինգտոնին: Նկարագրեք նրան:

ա) Մեղադրեք:

բ) Արդարացրեք:

6. Ինչպիսի՞ն է հեղինակի վերաբերմունքը միստր Քովինգտոնի նկատմամբ:

7. Ինչպիսի՞ն էր Քովինգտոնը, որպես վաճառատան տեր:

8. Ելնելով գրքում եղած փաստերից՝ նկարագրեք միստր Սաֆրթիի տունը, կենցաղը և բնավորության գծերը:

Գրավոր աշխատանք.

Մի դեպք իմ կյանքից

Գլուխ 14

ԴԻԱՆԱ

1. Ի՞նչ օրենքներ գիտեք:

2. - *Ինչո՞ւ են ստեղծվել բոլոր այդ օրենքները,- հարցրեց Օզին:*

ա) Ի՞նչ պատասխանեց Սփանգլերը:

բ) Ի՞նչ կպատասխանեք դուք:

3. - *Ի՞նչ եք ուզում ասել խելացի ասելով,- ասաց Օզին,- մի՞թե ցրիչ դառնալու համար անպայման պետք է խելացի լինել:*

- Ոչ,- ասաց Սփանգլերը,- բայց դա օգնում է: Խելացի լինելը օգնում է, անկախ նրանից, թե ի՞նչ ես անում:

- Լավ,- ասաց Օզին,- իսկ ինչի՞ց կարող եք իմանալ, որ մարդը խելացի է:

ա) Ի՞նչ պատասխանեց Սփանգլերը:

բ) Ի՞նչ կպատասխանեք դուք:

4. Նկարագրեք միսս Դիանային:

5. Ինչո՞ւ է գլուխը կոչվում «Դիանա»:

6. Առանձին մասերի բաժանեք գլուխը: Վերնագրեք դրանք:

7. Գտեք լեզվական անհարթությունը հետևյալ հատվածում.

- Ցուլիսի՞ս,- ասաց Դիանան Սփանգլերին,- Ի՞նչ յուրահատուկ անուն: Ցուլիսի՞ս: Ցուլիսիսը Իթաքայում: Միրելիս, ես ընդամենը մի րոպե ժամանակ ունեմ: Ճաշի գալո՞ւ ես, չէ՞: Պետք է գաս, հասկացա՞ր: Սփանգլերը փորձեց պատասխանել, բայց երիտասարդ կինը կանչեց նրան:

- Ոչ,- ասաց նա,- դու խոստացար: Այո, խոստացար: Հայրիկն ու մայրիկը մեռնում են քեզ տեսնելու համար: Ուղիղ ժամը յոթին:

Գլուխ 15

ԱՆԿՅՈՒՆԻ ԱՂՋԻԿԸ

1. *Դիմացի անկյունում, երեսուն յարդ հեռավորության վրա, կանգնել էր ամոթխած, տխուր տեսքով տասնութ կամ տասնինը տարեկան մի աղջիկ: Սիրուն էր նա, հոգնած, լուռ և հրաշալի: Նա ավտոբուսի էր սպասում՝ աշխատանքից տուն գնալու համար: Թեև Սփանգլերը շտապում էր, բայց, միևնույն է, չէր կարող չնկատել միայնակ աղջկան, որը նրան թվաց, մենության մարմնացում է աշխարհի վրա: Առանց կանխամտածության, առանց կոտրատվելու, նա արագ հասավ աղջկան, մի պահ կանգ առավ և համբուրեց նրա այտը: Հեռանալուց առաջ նա աղջկան ասաց միակ բանը, որ հնարավոր էր ասել այդ պահին:*

- Դուք աշխարհի ամենասիրուն կինն եք:

Հարցը ձևակերպեք ինքներդ:

2. Ի՞նչ ընդհանրություն ունեն հետևյալ 2 հատվածները.

ա) *Նա կռացավ վանդակորմին և համբուրեց ծեր կնոջը:*

- Դե, խելոք, Թոմ,- ասաց միսիս Բրոքինգտոնը:

- Մի ընդդիմացեք,- ասաց Սփանգլերը,- դուք չպետք է վատ զգաք: Ես ձեզ համբուրել եմ ցանկացել դեռ այն օրվանից, երբ առաջին անգամ եկա այստեղ և ձեզ տեսա. հիշո՞ւմ եք: Քանի տարի

է անցել, և դուք ամեն տարի գնալով ավելի եք գեղեցկանում:

- Օ՜, ի՞նչ եք ասում, Թոմ,- ասաց ծեր կինը,- ծեր կնոջը ձեռ առնելը լավ չէ:

- Ծեր,- ասաց Սիփանզլերը,- դուք ծեր չեք:

- Դու ազնիվ ես, Թոմ,- ասաց տիկին Բրոքինգտոնը...

բ) *- Այդ սև մարդը նորից գնացքի մեջ կլինի՞,- հարցրեց փոքրիկ տղան:*

Միսիս Մաքոլին մի պահ մտածեց, հետո ասաց.

- Այո:

3. Բնութագրեք Կորբետին:

4. Նկարագրեք նրան և նրա խորտկարանը:

5. Գլուխը բաժանեք առանձին մասերի: Վերնագրեք այդ մասերը:

6. Ի՞նչ կապ կա այդ մասերի միջև:

Գլուխ 16

ՔԵԶ ՆՈՐԻՑ ՏՈՒՆ ԿՏԱՆԵՄ

1. Կազմեք հարցեր գլխի վերաբերյալ:

2. Ո՞ր հատվածն եք դուք կարևորում այս գլխում: Ինչո՞ւ:

3. *Ցրիչը դուրս եկավ գրասենյակից, և Սիփանզլերը տեսավ, թե ինչպես է նա եղբորը զգուշությամբ նստեցնում հեծանիվի առջևը: Ավագ [illegible]այրը իրեն գցեց հեծանիվի վրա և սկսեց քշել [illegible]ն ի վար: Երբ նրանք քաղաքի կենտրոնից հեռա[illegible]ին...*

Փորձեք գտնել այլ շարունակություն:

Գրավոր աշխատանք. Իմ փոքրիկ եղբայրը կամ քույրը

- Նպարավաճառը այս աշխույժ ճշմարտությունը զոռաց իր տղայի երեսին հայրական տանջալից սիրուց դրդված: - Մեզ պետք չէ,- ասաց նա,- ո՛չ խնձոր, ո՛չ նարինջ, ո՛չ կոնֆետ, ո՛չ բանան, վախեցիր Աստծուց, տղաս, այդ բանը մի արա: Եթե ես այսպիսին եմ, դու իմ որդին ես, պետք է ինձնից լավը լինես: Երջանիկ եղիր: Ես դժբախտ եմ, բայց դու պետք է բախտավոր լինես:

9. Ի՞նչ կապ կա ծիրանի տեսարանի և հաջորդող տեսարանի միջև: Ինչո՞ւ են նույն վերնագրի տակ երկուսն էլ:

10. Հովհ. Թումանյանի ո՞ր հեքիաթում կա երջանկության բանաձևը:

Գրավոր աշխատանք.

Երջանկությունն իմ պատկերացմամբ

Գլուխ 26

ԿՅԱՆՔՈՒՄ ՄԻՇՏ ՑԱՎ ԿԼԻՆԻ

1. Բացատրեք հետևյալ հատվածը.

...Կարծում էի, որ մարդ երբեք լաց չի լինի, երբ մեծանա, չափահաս դառնա, բայց պարզվում է, որ հենց այդ ժամանակ է մարդը սկսում լաց լինել, որովհետև այդ ժամանակ է, որ նա սկսում է հասկանալ ամեն ինչ:

2. Քննարկեք հետևյալ հատվածը.

Եթե կյանքը տխուր է, ազնիվ կամ անմիտ, դրա պատճառը մարդն է: Եթե հարուստ է և գեղեցկությամբ լեցուն, ուրեմն ինքը մարդն է այդպիսին և ոչ թե նրա շրջապատը: Այդպես է: Եթե որևէ բան վատ է, տգեղ կամ խեղճ, միշտ ինքը մարդն

է այդպես, և յուրաքանչյուր մարդ ինքը իր մեջ մի աշխարհ է: Յուրաքանչյուր մարդ մի ամբողջական աշխարհ է, նա այդ աշխարհը կարող է վերակառուցել և սիրելի մարդկանցով բնակեցնել, եթե նրա սիրտը ընդունակ է սիրո, կամ լցնել ատելի մարդկանցով, եթե նրա սիրտը ընդունակ է ատելության: Աշխարհը պետք է վերակառուցվի նրա մեջ ապրող յուրաքանչյուր անհատի կողմից: Վերակառուցվի ամեն օր, ինչպես անկողինն ու այն տունը, որտեղ նույն մարդիկ են ապրում: Այդ մարդիկ միշտ նույնն են, բայց և միշտ փոխվում են:

3. Քննարկեք.

...Եթե մարդը խիղճ չունի, նա մարդ չէ, նա դեռ իսկական մարդ չէ, որովհետև կարեկցանքից է ծնվում բուժիչ բալասանը: Միայն բարի մարդիկ են լաց լինում: Այն մարդը, որ լաց չի լինում աշխարհի ցավի համար, նա վատ է, քան կեղտը, որի վրայով քայլում է, որովհետև կեղտը դեռ սնում է սերմը, արմատը, ծիլը և ծաղիկը, իսկ առանց խղճի ու կարեկցանքի մարդու հոգին անպտուղ է, ոչինչ չի կարող սնուցել, բացառությամբ ամբարտավանության, որը, ի վերջո, կարող է մարդուն առաջնորդել սպանության, գեղեցիկի սպանության կամ նույնիսկ մարդկային կյանքի սպանության:

Ի՞նչ եք հասկանում *աշխարհի ցավ* ասելով:

4. Քննարկեք.

- Կյանքում միշտ էլ ցավ կլինի,- ասաց միսիս Մաքոլին,- սակայն այդ բանի գիտակցությունը չպետք է մարդուն հուսահատեցնի: Լավ մարդը աշխատում է հաղթահարել այդ ցավը: Իսկ

ա) Ի՞նչ է պատասխանում միստր Գրոգանը:

բ) Ի՞նչ կպատասխանեք դուք:

2. Ինչո՞ւ են առաջանում պատերազմները.

ա) միստր Գրոգանի կարծիքով (կարդացեք այդ հատվածը և քննարկեք),

բ) Հաստլիկի կարծիքով(գլ.17),

գ) միսիս Մաքոլիի կարծիքով (գլ. 7).

դ) ձեր կարծիքով:

3. Համաձա՞յն եք այս մտքի հետ: Ինչո՞ւ:

...Լավը անպարտելի է, իսկ վատը, ի վերջո, պարտվում է, փախուստի դիմում...

4. Ինչպե՞ս եք հասկանում հետևյալ միտքը.

Ոչ ոք իզուր չի մեռնում: Մարդիկ մեռնում են՝ ձգտելով դրախտի, տենչալով անմահություն, տենչալով ճշմարտություն ու արդարություն: Կգա օրը, երբ բոլոր մարդիկ, մենք բոլորս, մեզնից ամենահեռին անգամ, կհասնեն վերջնական օթևանի, կհանգստանան, կհասնեն անմահության, չարությամբ լեցուն այս աշխարհը կդառնա բարության մի աշխարհ:

Գլուխ 19

ՄԱՅՐԻԿԻՆ՝ ՍԻՐՈՎ

1. Ճի՞շտ վարվեց Հոմերը, որ հեռագիրը հանձնեց հենց այդ օրը: Ինչո՞ւ:

2. Համեմատեք «Դու քո ճանապարհով գնա, ես՝ իմ» գլուխը «Մայրիկին սիրով» գլխի հետ։

Ի՞նչ նմանություններ և տարբերություններ կան:

3. Փորձեք ներկայացնել այդ ընտանիքը մինչև պատերազմը:

4. Ինչո՞ւ է գլուխն այդպես վերնագրված:

5. Ինչպե՞ս կվերնագրեք դուք:

Գլուխ 20

ԴԱ ՁԵՐ ԴԺԲԱԽՏՈՒԹՅՈՒՆՆ Է, ՈՉ ԹԵ ԻՄ

1. Ինչպե՞ս եք հասկանում այս հատվածը.

Ժամանակն էր, որ նրանք հրաժեշտ տային իրար, բայց փողոցում կանգնել էին և կարծես սպասում էին ինչ-որ մի հրաշալի, լինելության սահմանի վրա գտնվող անբացատրելի բանի:

2. *- Է՛յ, տղաներ,- բղավեց Հաստլիկ կոչվող վինվորը,- երբ կոնգրես հասնեմ, ես նրանց մի երկու խոսք պիտի ասեմ:*

Ձեր կարծիքով, ի՞նչ պետք է ասեր Հաստլիկը:

3. Բացատրեք.

- Յիպի-ալ-ալ,- բղավեց Ջին,- բայլեք, շան որդիներ, դա ձեր դժբախտությունն է, ոչ թե իմ:

4. Քննարկեք հետևյալ պատկերը.

...Խնդրեն խորասուզվել մութ, անվտանգ փողոցի մեջ ընդառաջ գնալով պատերազմին:

Գլուխ 21

ԱՎԵԼԻ ԼԱՎ ԱՇԽԱՐՀ, ԱՎԵԼԻ ԼԱՎ ՄԱՐԴԻԿ

1. Ընդարձակեք բնության հետևյալ պատկերը.

...Անձրևը դադարել էր, լուսինը փայլում էր, և

դատարկված ու հոգնած ամպերը, այժմ սպիտակած, քշվում էին երկնքով:

2. *....Բայց ուզում եմ ամեն ինչ հասկանալ և միշտ ձգտել հասկանալ: Բայց ինչպե՞ս անել, մարդ ինչի՛ց կարող էր իմանալ, որ արդեն հասկանում է:*

Ի՞նչ կպատասխանեք դուք Հոմերին:

3. *... Ես այն տղան չեմ, ինչ որ մարդիկ կարծում են: Ես միաժամանակ ուրիշ մարդ եմ, ավելի լավը: Երբեմն նույնիսկ ինքս չգիտեմ, թե դա ինչպես է առաջվում:*

Ի՞նչ են մտածում շրջապատի մարդիկ ձեր մասին, և ինչպիսի՞ն եք դուք իրականում:

4. *- Երբեմն մտածում եմ,- շարունակեց նա,- որ աշխարհում ամեն ինչ ուրիշ ձևով պիտի լինի, աշխարհը պետք է ավելի լավը լինի, մարդիկ պետք է ավելի լավը լինեն, և աշխարհի գործերը չպետք է այնպես ընթանան, ինչպես ընթանում են...*

- Ինձ դուր չի գալիս աշխարհի դրվածքը, միստր Գրոզան,- ասաց նա, չգիտեմ ինչու, բայց ուզում եմ, որ ավելի լավ լինենք: Ես համոզված եմ, որ ավելի լավը կլինենք...

Ինչո՞ւ են մարդկանց գործերը վատ ընթանում, ձեր կարծիքով:

5. Ինչպե՞ս եք հասկանում հետևյալ միտքը.

...Սրանից հետո միշտ պիտի դիտեմ: Պիտի միշտ մտածեմ իմ տեսածի մասին: Դա մարդուն տխուր է դարձնում, բայց հոգ չէ:

6. Բացատրեք.

Ես մտածում եմ այն մարդկանց մասին, որոնք

տխուր են և անարգված, բայց դիմակուն չեն, և ինձ թվում է, որ աշխարհը լեցուն է նման մարդկանցով...

7. Քննարկեք հետևյալ հատվածը.

Դպրոցում ևս շատ ծիծաղելի բաներ եմ տեսել, բայց ոչ ուսուցիչների գործը դժվարացնելու համար: Ես դրանք ասում եմ, որովհետև անհրաժեշտ է ասել: Բոլորը այնքան տխուր ու շփոթված են, և ամեն ինչ այնքան թերի է, սխալ ու խառնակ, որ ես ստիպված եմ երբեմն ծիծաղելի բաներ ասել: Ինձ թվում է, որ բոլի ողջ լինելուց մենք պետք է մի քիչ էլ ծիծաղենք:

8. Ինչպե՞ս եք հասկանում հետևյալ միտքը.

Ես չեմ կարծում, որ կարող եմ նպատակադրված ձևով քաղաքավարի կամ բարեկիրթ լինել, նույնիսկ եթե ուզենամ: Ես չեմ կարող քաղաքավարի լինել, եթե դա իմ նկարագրին չի բերում:

9. Քննարկեք հետևյալ երկխոսությունը.

- Խնդրում եմ տոքդ իմ շնորհակալությունը հայտնես:

- Ոչինչ,- ասաց գրիչը:

- Ոչ,- ասաց միստր Գրոգանը,- դա ոչինչ չէ: Խնդրում եմ իմ կողմից շնորհակալություն հայտնես նրան:

Գլուխ 22

ԵՂԻՑԻ ԼՈՒՅՍ

1. 15-րդ գլխի ո՞ր հատվածի հետ կհամեմատեք հետևյալ հատվածը.

Դու ծեր չես, և աշխարհում ոչ ոք չի կարող քեզ թոշակի ուղարկել: Դու շատ լավ գիտես, որ այս գրասենյակում առանց քեզ կորած եմ: Դու հարյուր տարի պիտի ապրես և ամեն օր պիտի աշխատես:

2. *Բժիշկներն ամեն ինչ չեն հասկանում, իսկ դու և ես ապրում ենք հոգով:*

Ի՞նչ է նշանակում *ապրել հոգով* արտահայտությունը:

3. Գրեք *մեծ հանգստի գնալ* արտահայտության համարժեքները:

4. Համամի՞տ եք Սփանգլերի հետ.

... Պետք է անել այն, ինչ սիրում ես, և դա հաճախ ավելի կարևոր է, քան այն, ինչ պարտավորված ես անել...

5. Պատմեք Սփանգլերի և տղայի I հանդիպման մասին:

6. Ինչո՞ւ Սփանգլերը փող տվեց տղային I անգամ:

7. Ինչո՞ւ փող տվեց II անգամ:

8. Ինչո՞ւ տղան ասաց. «Ինձ մնում է ինքնասպան լինել»:

9. Քննարկեք հետևյալ հատվածը.

Վերցրու քո փողը: Այո, դա քոնն է, քանի որ դու դրա համար պետք է բարձրացնելու անհրաժեշտություն զգայիր: Ես գիտեմ, թե դու ինչ ես ուզում, որովհետև ես ինքս նույնը զգացել եմ: Մենք բոլորս էլ այդ նույն բանը զգացել ենք: Գերեզմանատներն ու բանտերը լեցուն են ամերիկացի ազնիվ տղաներով, որոնց վատ բախտ ու դժվարին պայմաններ են վիճակվել: Նրանք ոճրագործ չեն...

10. - *Ի՞նչ կարելի է անել,- հարցրեց նա:*

– Առանձնապես ոչինչ,– ասաց Սիմանգլերը,– որևէ հարմար գործ: Կարևոր չէ, թե մարդ ինչ է անում: Որևէ լավ, պատվավոր աշխատանք:

ա) Ի՞նչ է նշանակում *պատվավոր աշխատանք:*

բ) Կա՞ն անպատիվ աշխատանքներ:

11. Քննարկեք հետևյալ երկխոսությունը.

– Ես միշտ անհանգիստ և դժգոհ եմ եղել,– ասաց երիտասարդը, չգիտեմ, թե դա ինչից է: Ինձ համար ոչ մի բան նշանակություն չունի: Ես մարդկանց չեմ սիրում: Չեմ սիրում նրանց հետ լինել: Նրանց չեմ վստահում: Չեմ սիրում նրանց ապրելը, խոսելը, այն բանները, որոնց հավատում են, այն, որ իրար անընդհատ հրմշտում են:

12. Քննարկեք.

... Ապականություն և ապանություն է ամեն տեղ, ամեն օր, և աշխարհում ոչ մի մարդ չի ապրվում դրանից...

13. Քննարկեք.

... Երկար ժամանակ այնպես էի կարծում, որ մարդկային կեղտը անհուսալիորեն ապականված է, որ աշխարհում ոչ մի մարդ չկա, որը իսկապես մարդ լինի, արժանի հարգանքի: Երկար ժամանակ ատում էի ոչ միայն այս աշխարհի հզորներին, այլև անարգվածներին:

14. Ինչո՞ւ Սիմանգլերը *ամեն ինչ լավ է*-ն դարձրեց *ամեն ինչ հրաշալի է:*

15. *Ես մտածում եմ այն մարդկանց մասին, որոնք մխուր են և անարգված, բայց դիմացկուն չեն, և ինձ թվում է, որ աշխարհը լկտուն է նման մարդկանցով:*

Ի՞նչ կապ կա այս հատվածի և տվյալ իրադրության միջև:

16. Բնութագրեք տղային.

ա) մեղադրեք նրան,

բ) արդարացրեք:

17. Ձեզ ծանոթ հերոսներից ուրիշ ո՞ւմ հետ կստացվեր տղայի անկեղծ զրույցը: Ինչո՞ւ:

ա) Որտե՞ղ կարող էին հանդիպել նրանք:

բ) Գրեք երկխոսություն, որը կարող էր կայանալ նրանց միջև:

18. Բնութագրեք Դեյվնփորթին:

19. Դուրս գրեք նրա արտահայտած բոլոր մտքերը:

20. Ինչո՞ւ էր Գրոգանը նրան *մեծ մարդ* անվանում:

21. Գլուխը բաժանեք բովանդակային անկախություն ունեցող մասերի և վերնագրեք դրա՛նք:

22. Ի՞նչ կապ եք տեսնում այդ մասերի միջև:

23. Ինչո՞ւ է ամբողջ գլուխը վերնագրված «Եղիկի լույս»:

Գրավոր աշխատանք.

Ի՞նչ եմ մտածում աշխարհի մասին

Իմ մասին

Գլուխ 23

ՄԱՀ, ԻԹԱՔԱ ՄԻ ԳՆԱ

1. Մեկնաբանեք Հոմերի երակը՝ կապված Բայֆիլդի հետ:

2. Մեկնաբանեք Հոմերի երակը՝ կապված մահվան համբավաբերի հետ:

3. Մեկնաբանեք Հոմերի III երակը:

4. Ինչպե՞ս եք հասկանում *ամեն ինչ շուրջը ժպտում էր* արտահայտությունը:

Ներկայացրեք փոքրիկ պատկեր, որտեղ հնարավոր լինի օգտագործել այդ արտահայտությունը:

5. *Բր առջև, փիլիսն հողի մեջ խրված, նա տեսավ ձկնորսական ձողը, բայց այդ ձողը ամառվա այդ օրվա հետ ոչ մի կապ չուներ և այստեղ գտնվում էր շատ հին ժամանակներից:*

Նկարագրեք ամառային այդ օրը մանրամասնորեն և գույց տվեք ուրիշ առարկաներ և երևույթներ, որոնք կապ չունենան օրվա հետ:

Գլուխ 24

ԾԻՐԱՆԻ ԾԱՌԸ

1. Ի՞նչ անհարթություն կա I նախադասության մեջ: Ուղղեք այն:

2. *Տուն վերադառնալու ճանապարհին Յուլիսիսը կանգ առավ դիտելու, թե ինչպես է մյուս հարևանը ամբար շինում: Այդ մարդը շատ բարձրահասակ էր, նյարդային և անհամբեր, նա չգիտեր է ձեռնարկեր այդպիսի աշխատանք: Նա կատաղությամբ էր աշխատում, ամեն տեսակ սխալներ թույլ տալիս, Յուլիսիսը դիտում էր նրան ու ոչինչ չէր հասկանում:*

Ինչպիսի՞ աշխատանք պիտի ձեռնարկեն նյարդային և անհամբեր մարդիկ:

3. *Այդ տղան Լայոնել Քեբոտն էր, որին թեև հարևանները հիմար էին համարում, սակայն մարդկային մի մեծ էակ էր, հավատարիմ, բարի և վեհանձն:*

Ի՞նչ գիտեք Լայոնելի մասին:

4. *- Միրան գողանալը այն գողությունը չէ, որ գրված է Ավետարանում,- ասաց Օգին:- Սա ուրիշ բան է:*

ա) Համամի՞տ եք Օգիի հետ:

բ) Ի՞նչ է գրված Ավետարանում գողության մասին:

5. *Շուրջ հարյուր մետր հեռավորության վրա տղաները կանգնեցին հիանալու համար այդ հոչակավոր ծիրանի ծառով, որը ամբողջությամբ կանաչ էր, գեղեցիկ, շատ հին շատ մեծ:*

Նկարագրեք ծիրանի ծառը այլ բառերով՝

ա) ավելի ընդարձակ,

բ) ավելի համառոտ:

6. Բնութագրեք ծերուկ Հենդերսոնին.

ա) Նկարագրեք արտաքինը:

բ) Նկարագրեք Հենդերսոնի տունը և բակը:

գ) Հորինեք փոքրիկ պատմություն այն մասին, թե ինչո՞ւ էր նա մենակ ապրում:

7. *Նրանք վախենում էին Հենդերսոնից, վախենում էին մեղքից, բռնվելու վտանգից և հանցանքից, վախենում էին, որ մի քիչ շուտ են եկել, և ծիրանները կարող էին խակ լինել:*

Շարունակեք, է՞լ ինչից կարող էին վախենալ երեխաները:

8. *Յուլիսիսը հնազանդությամբ երեք բայլ ևս գնաց ու կանգնեց դիտելու արտասովոր մանրամասները արտասովոր ծառի հետ:*

ա) Ինչո՞վ էր մենամարտն արտասովոր:

բ) Ինչո՞վ էր ծառն արտասովոր:

գ) Տարբեր բառերով բնութագրեք մենամարտն ու ծառը:

դ) Գտեք մի այլ բառ՝ բնորոշող թե՛ մենամարտը, թե՛ ծառը:

9. Ինչպե՞ս եք հասկանում հետևյալ արտահայտությունը.

Նա վախել սկսեց ոտքը դեռ գետին չառած:

Նույն միտքն արտահայտեք այլ բառերով:

Բառային աշխատանք.

ա) Բացատրեք *արտա* մասի նշանակությունը *արտասովոր* բառում և դրանով կազմեք նոր բառեր:

բ) *Արտա* մասը միացրեք ցանկացած բառի հետ և փորձեք բացատրել այն:

Գրավոր աշխատանք.

Արտասովոր պատմություն արտասովոր դեպքի մասին

Գլուխ 25

ԵՐՋԱՆԻԿ ԵՂԻՐ, ԵՐՋԱՆԻԿ ԵՂԻՐ

1. *Ի վերջո, մի առթանչիկ դուրս եկավ այդ մեծ մարդը Յուլիսիսի ձեռքից բռնած:*

Ինչո՞ւ է Օգյուստ Գոթլիբը *մեծ մարդ* անվանվում:

2. *Փոքրիկ Յուլիսիսը նայում էր նրանց, բայց լրիվ չէր ըմբռնում կատարվածի խորհրդավոր իմաստը, թեև վստահ էր, որ այն, ինչ կատարվում է, այդ պահին ավելի կարևոր է, քան աշխարհում որևէ ուրիշ բան:*

Ո՞րն է կատարվածի խորհրդավոր իմաստը:

3. Կետադրեք հատվածը.

Նա մի պահ կանգնեց իանութի շեմքին դիտեց նոր մեսիային և նրա աշակերտներին լսեց նրանց հիասկան բացականչությունները սրբապան կուռքի առաջ

4. - *Սա մարտի ծիրան է,- իանութպանին ասաց Օգյուստ Գոթլիբը՝ թափառող ներվիշների առաջնորդը:- Ա՛յ, նայեցեք:- Նա դարձյալ բացեց բռունցքը, մեջտեղ հանելով կանաչ, կարծր պտուղը:- Նայեցեք, Արա,- ասաց Օգին և ավելացրեց,- զեղեցիկ է, այնպես չէ՞:*

ա) Ինչո՞ւ էին տղաներն այդքան հիացած խակ ծիրանով:

բ) Բարձրաձայն կարդացեք այն բոլոր հատվածները, որտեղ նկարագրված է ծիրանը:

5. Քննարկեք հետևյալ հատվածը.

...Բնական է, որ թախիծ կար նրանցից յուրաքանչյուրի աչքերում: Բայց արդյո՞ք նույն թախիծը չէր լինելու, եթե նրանք ապրեին այսօրվա յոթ հազար մղոն հեռու իրենց տանը, հայրենիքում: Հայրը նայում էր որդուն և նրա մեջ տեսնում էր իր սեփական դիմագծերը: Իր իսկ աչքերն էին, և աչքերի խորքում իր իսկ դժբախտությունը:

6. Քննարկեք.

...Նա այդ մարդուն նայեց հասկացողությամբ, համակրանքով և, միաժամանակ, զեղչկական ինչ-որ գայրույթով, ոչ թե այդ մարդու դեմ, այլ աշխարհի դեմ, հիվանդության, վշտի դեմ, թախիծի դեմ, որը ուղում է այն, ինչ երբեք չի կարող ունենալ:

7. Մեկնաբանեք հետևյալ հատվածը.

Նա պարզապես ուզում է: Նայում է Աստծուն և ասում՝ տուր ինձ այս, տուր ինձ այն, բայց երբեք զոհ չէ: Միշտ ուզում է և միշտ դժգոհ է: Իսկ խեղճ Աստվածը ոչինչ չունի տխրությունը ամոքելու համար: Նա մարդկանց տվել է ամբողջ աշխարհը, արևի լույս, մայր, հայր, եղբայր, քույր, հորեղբայր, պարմիկ, տուն, հող, վառարան, անդան, մահճակալ, խեղճ Աստված ամեն ինչ տվել է, բայց ոչ որ երջանիկ չէ. բոլորը այդ հիվանդ փորիկի նման են, բոլորն ասում են՝ «Չամիչով բլիթ տվեք»...

8. Քննարկեք հետևյալ հատվածը.

- Աշխարհը զժվել է,- ասաց նա փոքր տղային,- պատերազմի այս օրերին, Ռուսաստանում, որ այնքան մոտ է մեր հայրենիքին, մեր հրաշալի փոքր ապգին, միլիոնավոր մարդիկ, միլիոնավոր երեխաներ սոված են մնում: Նրանք մրսում են, թափառում են խեղճ, ոտաբոբիկ, անօթևան, նրանք աղոթում են մի կտոր չոր հացի համար, քնելու ու հանգստանալու տեղի համար, մի գիշեր խաղաղ լուսացնելու համար: Իսկ մե՛նք: Ինչո՛վ ենք մենք պբաղված այստեղ Կալիֆոռնիայի Թթաբա բաղաբում. այս մեծ երկրում Ամերիկայում: Ինչո՛վ ենք պբաղված մենք: Մենք լավ կզեստներ ենք հագնում: Ամեն առավոտ, հենց որ ելնում ենք անկողնուց, հագնում ենք զեղեցիկ կոշիկներ, հանգիստ քայլում ենք փողոցներով, և ոչ որ վենբով չի ապտնում, չի այրում մեր մտքերը, չի ապտնում մեր երեխաներին, եղբայրներին, հայրերին: Մեքենայով շրջում ենք և հիանում զեղեցիկ բնությունով, ուտում ենք համեղ բաներ, ամեն գիշեր անկողնում հանգիստ քնում ենք, և ի՛նչ: Դժգոհում ենք: Մենք դեռ դժգոհ ենք:

Գլուխ 17

ԵՐԵՔ ՋԻՆՎՈՐ

1. Քննարկեք հետևյալ հատվածը.

Նրանց դիմապիկ զալիս էին երեք երիտասարդ զինվորներ, որոնք փողոցում երջանկություններ զժություններ էին անում, նոր-նոր խաղեր հնարում: Նրանք երջանիկ էին, որովհետև այդ զիշեր ապատ էին, որովհետև իրենց շուրջը ապնիվ և ծիծաղելի աշխարհն էր՝ իր հավիտենական կատակերգություններ, երջանիկ էին նույնիսկ տեղապող անձրևի պատճառով:

2. Բացատրեք.

Այս զիշերն այս զիշեր է, իսկ վաղը՝ վաղն է, բայց՝ վաղը մենք պետք է վերադառնանք մեր պրանոցները, պետք է վերադառնանք պատերազմի կրկեզի, բայց անհրաժեշտ ու սուրբ գործին ոչնչացնելու համար մարդու մեջ այն մանրէն, որը ձգտում է կործանել մարդու ապատ ոգին:

3. *- Նա խե՛նթ է,- շշնջաց Մերին:*

- Ոչ,- ասաց Բենը,- նա պարզապես տխուր է ...

Հարցը ձեևակերպեք ինքներդ:

4. Բացատրեք հետևյալ միտքը.

- Աշխարհի յուրաքանչյուր աղջիկ իմ աղջիկն է,- ասաց Հասուլիկը, և քանի որ ես չեմ կարող հեռագիր ուղարկել նրանցից յուրաքանչյուրին, կուղարկեմ միայն մեկին: Այդ մեկ հեռագրի մեջ ես միլիոնավոր հեռագրեր կուղարկեմ:

5. Ի՞նչ ընդհանրություն եք տեսնում ուղարկվող

հեռագրերի միջև:

6. Բարձրաձայն կարդացեք Ամերիկան և ամերիկացիներին փառաբանող հատվածները:

Ի՞նչ կապ կա դրանց և հետևյալ հատվածի միջև.

– Զարմանալի բան է,- ասաց Հաստլիկ կոչվող վինվորը Բևսին,- մարդ սկսում է ավելի շատ սիրել հայրենիքը, երբ այն վտանգի մեջ է: Ուրիշ ժամանակ հայրենիքը շատ սովորական է թվում, ինչպես ընտանիքը:

7. Քննարկեք հետևյալ հատվածը.

...Գրոշակը ինձ հիշեցնում է Չիկագոն, իսկ Չիկագոն ինձ համար ամեն ինչ է, որ իր մեջ ունի և լավ, և վատ բաները: Օրինակ, իմ ընտանիքը, իմ սիրած աղջիկը դրանք լավ բաներն են, իսկ խուլ, կեղտոտ նոնախորշերն ու քաղաքական խարդավանքները դրանք վատ բաներ են, բայց ես այդ բոլորը սիրում եմ...

8. Ինչո՞ւ Թոմաս Սփանգլերը որոշեց հեռանալ կինոյից:

9. Գլուխը բաժանեք մասերի: Վերնագրեք դրանք:

Գրավոր աշխատանք.

Սիրում եմ, որովհետև իմն է

Գլուխ 18

ՄԻՍՏՐ ԳՐՈԳԱՆԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ

1. *...Երբ որևէ մեկը պատերազմում մեռնում է, կարևոր չէ, թե ով ծանոթ, թե անծանոթ, դրանից աշխարհում որևէ բան բարելավվո՞ւմ է:*

...Գուցե նրանք իզուր են մահանում:

հիմարը այդ նույնիսկ չի տեսնում, քանի դեռ չի զգացել իր մարմնի վրա: Իսկ չար մարդը այն ավելի կիսրատնի և կտարածի իր շուրջը: Սակայն բոլորն էլ անմեղ են, որովհետև ինչպես չար մարդը, այնպես էլ հիմարն ու լավը իրենց կամքով չեկան այստեղ և ոչ էլ իրենք իրենց ստեղծվեցին ոչնչից: Նրանք ծնունդ են բազմաթիվ աշխարհների և բազմաթիվ սերունդների: Չարերը չգիտեն, որ իրենք չար են և, հետևաբար՝ անմեղ են: Չար մարդուն պետք է ներել: Նրան պետք է սիրել, որովհետև մեր յուրաքանչյուրից ինչ-որ բան կա աշխարհի յուրաքանչյուր չար մարդու մեջ, ինչպես որ նրանցից ինչ-որ բան մեր մեջ: Նա մերն է, մենք՝ նրանը: Մեկնիկ յուրաքանչյուրը մյուսներից անջատ չէ: Գեղջուկի աղոթքը՝ իմ աղոթքն է, մարդասպանի ոճիրը՝ իմ ոճիրը: Անցյալ գիշեր դու լաց եղար, որովհետև սկսեցիր հասկանալ այս բանները:

Գրավոր աշխատանք.

Ի՞նչ եմ մտածում կյանքի մասին

Գլուխ 27

ԲՈԼՈՐ ՀՐԱՇԱԼԻ ՍԽԱԼՆԵՐԸ

1. Մեղադրո՞ւմ եք տղաներին Լայոնելի հետ չընկերանալու համար:

2. Մեղադրո՞ւմ էր Լայոնելը նրանց (կարդացեք այդ մասը բարձրաձայն):

3. Բացատրեք հետևյալ հատվածը.

Նրանք միասին էին ման գալիս և միշտ իրար հետ էին լինում, ինչպես անում են լավագույն բարեկամները՝ այսինքն հանգիստ ու անհոգ,

առանց նույնիսկ իրար հետ խոսելու կարիք զգալու:

4. Քննարկեք.

- Յուլիսիսը մի օր մեծ մարդ է դառնալու, ինչո՞ւ չէ՛, մայրիկ,- ասաց Հոմերը:

- Ոչ,- ժպտաց միսիս Մաքոլին,- ոչ, ես այդ կարծիքին չեմ, բոլոր դեպքերում ոչ աշխարհի համար, բայց անշուշտ նա մեծ է լինելու, որովհետև նա այժմ էլ մեծ է:

- Մարկուսը նույնպես մե՞ծ էր, երբ փոքր էր,- ասաց Հոմերը:

5. Վիպակում ուրիշ ո՞ւմ են մեծ գնահատում: Ինչո՞ւ:

6. Հնարավո՞ր եք համարում հետևյալ միտքը.

- Յուլիսիսը բոլորին է սիրում,- նկատեց միսիս Մաքոլին: - Նա աշխարհի բոլոր մարդկանց սիրում է:

7. *Ինձ թվում է, որ երեխան միշտ ինչ-որ մանկական բան է որոնում մեծերի մեջ և, եթե գտնում է դա որևէ մեկի մեջ, այդ մարդուն մյուսներից ավելի է սիրում:*

Համամի՞տ եք Հոմերի հետ: Ինչո՞ւ:

8. *- Այդ լայը ինձ ծանոթ է,- ասաց միսիս Մաքոլին,- ես այն առաջներում էլ լսել եմ: Դա բո լայը չէ: Ոչ էլ մեկ ուրիշինը: Դա ամբողջ աշխարհի լայն է: Ճանաչելով աշխարհի վիշտը, դու այժմ կանգնելիր բո ճանապարհի վրա, և բնական է, որ բազմաթիվ սխալներ գործես, այն բոլոր հրաշալի սխալները, որ դու պետք է գործես և գործելու ես:*

ա) Ո՞ր գլխում է խոսվել այս մասին:

բ) Ի՞նչ եք հասկանում *հրաշալի սխալներ* ասելով:

9. Քննարկեք հետևյալ հատվածը.

Կարևոր չէ, թե ինչ սխալներ կգործես կյանքում, մի վախեցիր գործած սխալներիդ հանար կամ նորերը գործելուց: Դու բարի սիրտ ունես, վստահիր սրտիդ, ունկնդրիր նրան և շարունակիր ճանապարհդ առանց կանգ առնելու: Եթե ընկնես խարխափած կամ հալածված ուրիշներից կամ ինքդ քեզնից, վեր կաց և ետ մի նայիր: Բազմաթիվ անգամներ պիտի ծիծաղես և բազմաթիվ անգամներ պիտի լաց լինես, այդ ծիծաղն ու արտասուքը շարունակ անբաժան պիտի լինեն իրարից: Քո կյանքում դու ոչ մի բոպե չես ունենա ատոր, ննիզ կամ փոքրոգի լինելու: Այդ բաները քեզնից ցածր են, շատ փոքր քո ոգու առույգության առաջ, շատ աննշան քո սեռապաշտը խափանելու համար:

10. Քննարկեք միսիս և միստր Մաքոլինների վրույթը:

Գլուխ 28

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ

1. Բնութագրեք Լայոնելին:

ա) Դուրս գրեք նրան բնութագրող տողերը նաև նախորդ գլուխներից:

բ) Բարձրաձայն կարդացեք և քննարկեք Լայոնելի արտահայտած մտքերը:

գ) Ձեր տվեք հեղինակի վերաբերմունքը Լայոնելի նկատմամբ:

2. *Վերջին վաթսուն տարիներին շատ գրքեր եմ կարդացել և չեմ կարող ասել, թե ինչ-որ բան կփոխվեր, եթե կարդացած չլինեի:*

ա) Համամի՞տ եք կնոջ հետ:

բ) Ի՞նչ են տալիս ձեզ ձեր կարդացած գրքերը:

Բառային աշխատանք.

Գրեք դարձվածքներ, որտեղ օգտագործվում է ***մեռնել*** բառը:

Ուրիշ ի՞նչ դարձվածքներով կարող եք արտահայտել ***մեռնել*** բառի իմաստը:

Գրավոր աշխատանք. **Գրադարանում**

Մոլորակ, որտեղ մարդիկ կարդալ չգիտեն

Գլուխ 29

ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԱԿՈՒՄԲՈՒՄ

1. Քննարկեք հետևյալ հատվածը.

- Ռոզալի Սիմս-Փիբիթի,- լեդին ուղղեց տղային:- Այո, Ռոզալի Սիմս-Փիբիթին հեռագիր է սպասում: Դու հեռագիրը նրան կհանձնես այն ժամանակ, երբ նա բեմում կերևա:

- Իսկ այդ ե՞րբ կլինի,- հարցրեց Հոմերը:

- Այս րոպեին,- ասաց լեդին,- նստիր և սպասիր: Երբ Ռոզալի Սիմս-Փիբիթին երևա, վազիր բեմ և բղավիր բարձր և հստակ ձայնով. «Հեռագիր Ռոզալի Սիմս-Փիբիթիի համար»: Փիբաթի չասես, հա՞:

- Շատ լավ, տիկին,- ասաց Հոմերը:

Ցրիչը նստեց, իսկ լեդին հեռացավ՝ ոտքի թաթերի վրա, հաստատորեն ժպտալով, կարևոր գործ կատարած մարդու տեսքով:

2. Ինչպիսի՞ն է ակումբային կանանց վերաբերմունքը

Սիմս-Փիբիթիի արկածային կյանքի նկատմամբ: Ինչո՞ւ:

3. Ինչպիսի՞ն է հեղինակի վերաբերմունքը Սիմս-Փիբիթիի նկատմամբ: Ցույց տվեք օրինակներով:

4. Ինչպիսի՞ն է ձեր վերաբերմունքը:

5. Դուրս գրեք ակումբային կանանց՝ Սիմս-Փիբիթիին նկարագրող տողերը: Համեմատեք:

6. Քննարկեք.

- Այստեղ արի, մանչուկ,- ասաց նա,- ես եմ Սիմս - Փիբիթին,- նա դարձավ ունկնդիրներին և ասաց,- ներեցեք լեդիներ: - Նա ստորագրեց, վերցրեց հեռագիրը և ցրիչին մի արծաթ դրամ տվեց ասելով,- վերցրու քո վարձը, մանչուկ:

Հոմերի համար վիրավորական էր այդ դրամն ընդունելը, բայց միևնույն ժամանակ ամեն ինչ այնպես ծիծաղելի էր և շփոթեցնող, որ նա չկարողացավ մերժել: Նա վերցրեց արծաթե դրամը և շատ այլայլված, բեմից ցած շտապելով, շենքից դուրս եկավ:

7. Քննարկեք հետևյալ հատվածը.

Ռոզալի Սիմս-Փիբիթիի տված արծաթը նա գցեց այդ մարդու գլխարկի մեջ և շտապեց դեպի իր հեծանիվը: Արդեն նստել էր հեծանիվը և քանի յարդ հեռացել, երբ զգաց, որ ինչ-որ վատ բան կար իր արարքի մեջ: Ետ դառնալով, նա հեծանիվը նետեց մայթի վրա և վազեց այն մարդու մոտ, որը երկու ոտքերն էլ կորցրել էր երեսուն տարի առաջ: Այս անգամ Հոմերը նրա գլխարկի մեջ մի քառորդանոց գցեց, իր սեփական քառորդանոցը:

Գլուխ 30

ԲԵԹՀԵԼ ՀՅՈՒՐԱՆՈՑՈՒՄ

1. *Իրեն անհասկանալի ինչ-որ պատճառով կրիչը վատ զգաց: Դա նման էր ճիշտ այն զգացումին, որ նա ունեցել էր մեքսիկացի կնոջ տանը, որի տղան պատերազմում սպանվել էր:*

Ի՞նչ ընդհանրություն կա այդ երկու իրադրությունների միջև:

2. Կազմեք հարցեր գլխի վերաբերյալ:

Գլուխ 31

ՄԱՐԴ-ՄԵՔԵՆԱ

1. Նկարագրեք անգործ մարդկանց խումբ:

2. Նկարագրեք անցորդների խումբ:

3. Մարդ-մեքենան մա՞րդ էր, թե՞ մեքենա: Ինչո՞ւ:

4. Ի՞նչ հակասություն եք տեսնում մարդ-մեքենայի արտաքինի և նրա ոեկլամած բուժադեղի միջև:

5. *Աշխարհը, անշուշտ, հրաշալի էր և անշուշտ լի լավ բաներով, որոնք կարելի էր նորից ու նորից տեսնել, բայց այժմ աշխարհն այնպիսին էր, որից փախչել էր պետք:*

Եղե՞լ է այնպիսի պահ, երբ դուք ցանկացել եք փախչել աշխարհից:

6. *Ո՞ւմ էին պետք այդ լուրերը, և ի՞նչ օգուտ դրանցից: Անշուշտ, կարելի էր թերթ ծախել և մի քանի սենթ շահել, բայց մի՞թե այդ է ամբողջը: Մի՞թե հիմարություն չէր օրվա սուտ լուրերը*

բղավել, կարծես ուրախ բան լիներ ավետածը: Ամոթ չէ՞ր, որ մարդիկ այդքան անտարբեր էին դարձել լուրերի հանդեպ:

ա) Ի՞նչ կպատասխանեք Օգիին:

բ) Ի՞նչ կասեք ձեր կարդացած թերթերի մասին:

7. Ի՞նչն է ձեզ դուր գալիս Օգիի աշխատանքի մեջ, ի՞նչը՝ ոչ:

8. Ինչո՞ւ մեր երկրում չկան շրջիկ լրագրավաճառներ:

9. *Թեև լրագրավաճառ տղան խորապես շնորհակալ էր հետազրաւտան վարիչի այդ վերաբերմունքից, սակայն, այնուամենայնիվ, գործարքը նրան արդարացի չէր թվում: Թերթը պետք է ծախել մեկ առ մեկ, և յուրաքանչյուրը տարբեր մարդկանց: Պետք է կանգնել փողոցի անկյունում և վերնագիրը բղավելով ժողովրդի մեջ թերթ կարդալու ցանկություն առաջացնել: Թեև դա այդպես էր, բայց նա շատ հոգնած էր և ուզում էր տուն գնալ ընթրելու:*

Համամի՞տ եք Օգիի հետ:

10. *...Նրանցից յուրաքանչյուրն էլ զգում էր, որ ինքը ուրիշ բան էր ուզում ասել...*

ա) Ձեր կարծիքով, ի՞նչ էր ուզում ասել Սփանգլերը, ի՞նչ՝ Յուլիսիսը:

բ) Փորձեք վերականգնել երկխոսությունը:

11. - *Տեսնո՞ւմ ես, Ջոն,- ասաց նա,- արդեն գիշեր է գալիս, շուտով մենք կմտնենք անկողին: Կքնենք ամբողջ գիշեր: Երբ առավոտ լինի, մենք նորից վեր կկենանք: Այդ կլինի նոր օր:*

Տվեք նոր օրվա ձեր ձևակերպումը:

12. - *Գործ գտնելու մասին երբեք մի մտածեք,-*

ասաց Հումերը: Նա բարկացած էր:- Բնկ հարկավոր չէ, Բեա, և ոչ էլ բնկ, Մերի: Ծող տղամարդիկ աշխատեն: Աղջիկները պետք է տանը մնան դաշնամուր նվագեն, երգեն և երբ տղամարդը տուն գառնա, գեղեցիկ տեսքով դիմավորեն նրան: Այդ է ձեր անելիքը...

Համաձա՞յն եք Հոմերի հետ: Ինչո՞ւ:

13. Բաժանեք գլուխը մասերի և վերնագրեք դրանք:

14. Կա՞ այնպիսի մաս, որն ավելորդ համարեք այս գլխում:

15. Համաձա՞յն եք, որ ամբողջ գլուխը վերնագրված է «Մարդ-մեքենա»: Ինչո՞ւ:

Գլուխ 32

ԹԵՎԵՐԴ, ՏԵՐ, ՄԵՋ ԱՊԱՎԵՆ

1. Քննարկեք հետևյալ հատվածը.

Թեև ակնհայտ էր, որ նրանք սովորել էին շարք կանգնել և կարգ ու կանոն պահպանել, անհատական ապատությունը ենթարկել ջոկատի պահանջներին, այսուհանդերձ, նրանք մեքենա չէին դարձել և դեռևս մնացել էին մարդկային էակներ, իրենց մարդկային պարզ ու հասարակ կանկություններով:

2. *Բոլորն էլ միևնույնական զգեստ էին հագել և բոլորն էլ յուրացրել էին պատերազմի արհեստը:*

ա) Ի՞նչ եք հասկանում *պատերազմի արհեստ* ասելով:

բ) Ի՞նչ եք հասկանում *պատերազմի արվեստ* ասելով:

3. Ինչպե՞ս եք հասկանում հետևյալ միտքը.

...Եթե նրանց աղնվագարությունը արդյունք էր խոր վախի, այնուհանդերձ, նրանք անվախներ էին:

4. *Ես կարծում էի, թե բոլորը հորս նման մեծ էին, մինչև որ աշխարհ մտա և հանդիպեցի ուրիշ մարդկանց: Անշուշտ, բոլորն էլ լավն են, բոլորն էլ հրաշալի են, բայց չեմ կարծում, որ մեծ լինեն: Գուցե դա նրանից է, որ ես նրանց դեռ լավ չեմ ճանաչում: Անհրաժեշտ է լավ ճանաչել մարդկանց, իմանալու համար մե՛ծ են նրանք, թե ոչ: Շատ մարդիկ կան, որ մեծ են, բայց ոչ ոք գլխի չի ընկնում, որ նրանք մեծ են:*

ա) Ի՞նչ տարբերություն կա *լավ մարդ* և *մեծ մարդ* արտահայտությունների միջև:

բ) Գուք ո՞ւմ կանվանեք մեծ՝ վեպում, կյանքում:

5. Լրացրեք Թոբի Ջորջի կյանքի մանրամասները:

6. Ինչո՞ւ տղաներն անառակ երգերից հետո յանկություն կգային երգելու հին, մաքուր սաղմոս:

7. Ինչո՞ւ է գլուխը կոչվում «Թևերդ, տեր, մեզ ապավեն»:

8. Ինչպե՞ս կվերնագրեք դուք:

Գլուխ 33

ՄԱՐԿՈՒՍԻ ՆԱՄԱԿԸ ԻՐ ԵՂԲԱՅՐ ՀՈՄԵՐԻՆ

1. Քննարկեք հետևյալ հատվածը.

...Մարդկանց վերաբերող գործերում դու շատ զգույշ եղիր: Եթե նույնիսկ քո աչքերով տեսնես, որ մեկը վատ է վարվում, վատահ մի եղիր, որ դու անպայման ճիշտ ես: Մարդկանց հանդեպ շատ զգույշ եղիր:

... Հիմարություն է մարդկանց բնորոշել նրա համար, որ նրանք այնպիսին են, ինչպիսին որ կան:

... Սխալ է մարդու արածների մասին վատ կարծիք կազմելը, թեկուզ ուրիշների կարծիքով դրանք ճիշտ չլինեն:

Նոր Կտակարանից ո՞ր հատվածը մեջ կբերեք՝ հաստատելու Գրոգանի միտքը:

2. Քննարկեք հետևյալ հատվածը.

Հասկացիր, որ մարդը պետք է շնորհակալ լինի այն իրողության համար, որ ինքը այն է, ինչ որ է, որովհետև, եթե նա բարի է, իր բարությունը միայն իրենը չէ, այն նաև ինն է, ուրիշինը: Այդ բարությունը նրանն է միայն այնքանով և նրա համար, որ պահպանի այն ու տարածի ամենուրեք թե ինձ և թե աշխարհում ապրող բոլոր մարդկանց համար: Դու ունես այդ բարությունը, դրա համար շնորհակալ եղիր: Վաղ թե ուշ այն կգնահատվի բոլորի կողմից: Մարդիկ երախտապարտ կլինեն քեզ դրա համար:

Գտեք նույն մտքի մեկ այլ արտահայտություն 26-րդ գլխում:

3. *Չգիտես մտքի ինչ ուզորդություններ, Հոմերը հանկարծ հիշեց Բեթհել հյուրասենյակների աղջկան և իր հետ խոսելու նրա ձևը:*

Ինչո՞ւ Հոմերը հիշեց աղջկան, ձեր կարծիքով:

4. Քննարկեք հետևյալ հատվածները.

ա) *Նրանք կկզան, որ դու չես դավաճանի, չես վիրավորի իրենց: Նրանք կկզան, որ դու չես արհամարհի իրենց, եթե նույնիսկ ամբողջ աշխարհը արհամարհի: Նրանք կկզան, որ դու*

իրենց մեջ տեսար այն, ինչ ամբողջ աշխարհը չուզեց տեսնել: Դու այդ պետք է գիտակցես: Դու դրանից չպետք է ինքդ քեզ: Դու արդեն մեծ մարդ ես, ուսանչորս տարեկան ես, հայտնի չէ, թե ո՛վ քեզ մեծ դարձրեց, բայց քանի որ դու իսկապես մեծ ես, գիտակցիր ուրեմն այդ և խոնարհ եղիր, պաշտպանիր այդ մեծությունը:

բ) *Ես քեզ դիտել եմ թե սթափ և թե հարբած, ես քեզ ճանաչել եմ: Ես աշխատել եմ աշխարհի տարբեր բաղաքներում: Երիտասարդ ժամանակ ուզեցի շատ բաղաքներ շրջել և շրջեցի: Ամբողջ կյանքումս, որտեղ որ գնացել եմ, շարունակ քեզ եմ փնտրել և գտել եմ հեռավոր ու խուլ վայրերում, անծանոթ, խոնարհ մարդկանց մեջ: Իմ հանդիպած յուրաքանչյուր մարդու մեջ քեզնից մի մաս եմ գտել, բայց այդ ինձ չէր գոհացնում: Եվ ահա, Բթաքայում, իմ տունդարձի ճանփին, գուցե քեզ և դու ավելի լավն ես, ավելի մեծ, քան մինչ այդ իմ տեսած բոլոր մարդիկ...*

6. Դասարանում բարձրաձայն կարդացեք Մարկուսի նամակը:

7. Քննարկեք հատվածը.

Իմ թշնամին մարդը չէ, որովհետև ոչ մի մարդկային էակ չի կարող իմ թշնամին լինել: Ով էլ որ լինի այդ մարդը, ինչ գույն էլ ունենա, ինչքան էլ սխալված լինի իր հանդգնություններում, նա իմ ընկերն է, ոչ թե թշնամին: Իմ պայքարը մարդու դեմ չէ, այլ նրա մեջ եղած այն գազանի դեմ, որը առաջին հերթին ուզում եմ իմ մեջ ոչնչացնել:

8. Քննարկեք հետևյալ հատվածը.

Ես ինձ հերոս չեմ զգում: Այդպիսի բաների

ընդունակ չեմ: Ոչ որի չեմ ատում: Նույնիսկ հայրենասեր էլ չեմ դարձել, որովհետև միշտ սիրել եմ իմ երկիրը, իմ ժողովուրդը, իմ քաղաքը, իմ տունը և իմ ընտանիքը: Ես, իհարկե, կուզենայի պատերազմ չլիներ, կուզենայի, որ բանակում չլինել, կուզենայի, որ պատերազմ չլիներ, բայց քանի որ բանակում եմ, և քանի որ պատերազմ է, վճռել եմ լինել լավագույն զինվորը: Չգիտեմ, ինչ է ինձ սպասում, բայց, ինչ էլ լինի, ես պատրաստ եմ խոնարհաբար ընդունել այն:

9. Ինչպե՞ս եք հասկանում հետևյալ միտքը.

Ուզում եմ իմանաս, որ ես ոչ մի հրամանի չեմ ենթարկվելու, բացի իմ խղճի հրամանից:

10. Քննարկեք.

Հույս ունեմ, որ այս նամակը վերջինը չի լինի, իսկ եթե այդպես լինի, մի հավատա, որ ես չկամ: Մի թող, որ մյուսներն էլ հավատան:

11. Ինչպե՞ս եք հասկանում հետևյալ միտքը.

Ուրախ եմ, որ ես եմ այն Մաքոլին, որը մասնակցում է պատերազմին, անարդար ու ցավալի կլիներ, եթե դու լինեիր:

12. Բացատրեք.

Դու պետք է հավիտյան ապրես: Ես վստահ եմ, որ կապրես: Հեռվից միշտ պիտի հսկեմ քեզ: Դու այն ես, ինչի համար կռվում ենք մենք:

13. *- Եթե իմ եղբայրը սպանվի այս հիմար պատերազմում,- ասաց նա, ես կթքեմ աշխարհի վրա: Առհավետ կատեմ: Բարի չեմ լինի, բոլորից չարը կլինեմ, ամենաչար մարդը, որ երբևէ ծնվել է:*

Համամի՞տ եք Հոմերի հետ: Կարո՞ղ էր Հոմերը դառնալ այդպիսին: Ինչո՞ւ:

Գլուխ 34

ՀԱՄԲՈՒՐՈՒՄ ԵՄ...

1. *Իթաքայի կյանքը, ինչպես աշխարհի բոլոր մասերի մարդկանց կյանքը, այնպիսի ընթացք էր ստացել, որ թվում էր անիմաստ և խառնաշփոթ, բայց երբ օրերն ու գիշերները դարձան ամիսներ ու տարիներ, պարզվեց, որ այդ կյանքը զուրկ չէ գեղեցկությունից: Վայրագությունն ու խատարտությունը մեղմացան, չափավորվեցին ու քաղցրացան կարեկցության առավել մեծ ուժի կողմից: Չարիքի հրեշային գույնը խամրեց արդարության պայծառ լույսի տակ, և երկուսը միասին ստացան մի գույն, որը ավելի գեղեցիկ էր, քան արդարության գույնն առանձին վերցրած:*

ա) Փիպակում ցույց տվեք անիմաստ և խառնաշփոթ վիճակներ:

բ) Ցույց տվեք կյանքը գեղեցկացնող դրվագներ:

գ) Ի՞նչ գույն ունի արդարությունը:

դ) Չարիքն ու արդարությունը միասին ի՞նչ գույն կարող էին ստանալ:

2. *Վայրագությունն ու խատարտությունը մեղմացան, չափավորվեցին ու քաղցրացան կարեկցության առավել մեծ ուժի կողմից:*

Ցույց տվեք վերոհիշյալը հաստատող դրվագներ:

3. Կարդացեք դասարանում «Երանիները» գրաբարով և փորձեք մեկնաբանել:

4. Մեկ նախադասությամբ արտահայտեք հետևյալ պարբերության իմաստը.

Ապրանքատար գնացքը շարունակեց իր ճանա-

պարծը և սևամորթը նույն ձևով կախվել էր վագոնի դռնից, խլուրդը դուրս եկավ գետնի տակից, միայն Հենդերսոնի ծիրանները ստայան արևի և ծիրան գողանալու եկած տղաների դեմքի կարմրավուն գույնը: Թուխս նստած հավը զբոսանքի եկավ ճուտիկների իր ամբողջ գերդաստանով: Յուլիսիսը դիտում էր: Հոմերի սրտի ցավն անցավ: Զատկի կիրակին Իթաքա եկավ: Եվ հետո` Զատկի հաջորդ կիրակին: Հետո` մի ուրիշ կիրակի, հետո` մի ուրիշը, հետո` ուրիշը, ուրիշը:

Գտիր կետադրական բացթողումը:

5. - Դասարանում բարձրաձայն կարդացեք ճանճի ու ճաղատի պատմությունը:

6. Ինչպե՞ս կմեկնեք Յուլիսիսի երազները:

7. Ինչո՞ւ միախոներ ծերուկը բարկացավ:

8. Այս գլխում հիմնական բովանդակությունից ո՞ր մասը կառանձնացնեք: Ինչպե՞ս կվերնագրեք այն:

9. Ի՞նչ ներքին կապ եք տեսնում այդ մասի և հիմնական պատումի միջև:

10. Հետևյալ նախադասության մեջ փոխեք կետադրական նշանների տեղերն այնպես, որ առաջանան իմաստային տարբերություններ.

Հետո, զարմանալի և ծիծաղելի լռությամբ և ամբիոնի լրջությամբ, տղաները առաջացան և ամբիոնի մոտի սեղանին մեկը մյուսի վրա դնելով ափսեները, վերադարձան իրենց տեղերը` ծնողների մոտ:

Բառային աշխատանք.

Կազմեք բառախաղակցություններ ***ճանճ*** և ***ճաղատ*** բառերով` ճաղատ ճանճը, ճանճոտ ճաղատը և այլն:

Գրանցից ամենահաջողվածով գրեք շարադրություն:

ԱՌՅՈՒԾԻ ԾԻԾԱՂԸ

1. Ո՞ւր կարող էին գնալ և ինչո՞վ կարող էին զբաղվել Իթաքայի տղաները ազատ ժամանակ:

2. Ո՞ւր կարող եք գնալ դուք և ինչո՞վ կարող եք զբաղվել ազատ ժամանակ:

3. Նկարագրեք միջավայրը. երևո՞ւմ է, որ այն հայկական չէ:

4. Կարևո՞ր է այս գլուխն ընդհանուր պատումի մեջ: Ինչո՞ւ:

5. Ինչո՞ւ է գլուխը կոչվում «Առյուծի ծիծաղը»:

6. Ինչպե՞ս կվերնագրեք դուք:

7. ***Ենոք Հոպերը Իթաքայի ամենաուժեղ, ամենաանհանգիստ, ամենաարագաշարժ, ամենաանհամբեր և ամենաբարձր ձայնով խոսող տղան էր:***

Վերցրեք բառի ***ամենա*** մասը և միացրեք ցանկացած առարկայի անվան հետ: Ապա փորձեք բացատրել, թե ո՞րն է ստացված բառի իմաստը:

Օրինակ` ամենագիրք - այն գիրքն է, ուր մեկ հուզող բոլոր հարցերի պատասխանները կան:

(Ջ.Ռոդարի)

Գրավոր աշխատանք. **Իմ ազատ ժամանակը**

Ամենա-Ամենա-Ամենա մոլորակում

Գլուխ 36

ԾԱՌԵՐՆ ՈՒ ՈՐԹԱՏՈՒՆԿԵՐԸ

1. Մեկնաբանեք հետևյալ պատկերը.

...Ես տեսել եմ կյանքի զետը, գուլալ ինչպես բյուրեղ: Այդ զետի երկու ափերին կանգնած էր կյանքի ծառը, որի վրա տասներկու տեսակ պտուղ էր աճում և այդ ծառի տերևները բուժում էին մարդկանց ցավերը...

Գտեք կետադրական բայթողումը:

2. Դուք ինչո՞վ կարող եք ճանաչել հայերի խումբը ազգային մյուս խմբերի մեջ:

3. Ձեզ ծանոթ մյուս ազգերին ինչպե՞ս կճանաչեք:

4. Ինչպե՞ս եք հասկանում հետևյալ միտքը .

Ամերիկայիներ են, նայիր նրանց: Ամերիկայիներ են հույն, սերբ, լեհ, ռուս, հայ, գերմանացի, իսպանացի, պորտուգալացի, իտալացի, հաբեշ, հրեա, ֆրանսիացի, անգլիացի, շոտլանդացի, իռլանդացի...:

5. Ի՞նչ գիտեք Ամերիկայի մասին:

6. Ի՞նչ գիտեք Ամերիկայի բնիկ ժողովրդի մասին:

Գլուխ 37

ԻԹԱՔԱ, ԻՄ ԻԹԱՔԱ

1. *Ձինվորը ծնկի եկավ և համբուրեց կայսրանի սալահատակը:*

- Մի համբույր իմ Իթաքային - ասաց նա: Հետո նորից համբուրեց և ասաց.

- Մի համբույր էլ:

Հետո նորից համբուրեց մի համբույր էլ, մի անգամ էլ:

Ինչո՞ւ է հայրենիք հասկացությունը կապվում նախ և առաջ հողի հետ:

2. *- Օ՛, բարև, Դենի,- ասաց միսիս Ռայֆը Դենի Պութին,- հիմա կգնամ և մայրիկին էլ կհամբուրեմ...*

17-րդ գլխի ո՞ր հատվածի հետ կարող եք համեմատել այս հատվածը:

3. *Երկու տների արանքը լցվել մարդկանցով, որոնք ինչ-որ հրաշալի շփոթության մեջ գնում ու գալիս էին...*

Նկարագրեք մի այլ տեսարան, որտեղ հնարավոր լինի օգտագործել *հրաշալի շփոթություն* արտահայտությունը:

Գլուխ 38

ՍԵՐԸ ԱՆՄԱՀ Է, ԱՏԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՀԱՆՈՒՄ Է ԱՄԵՆ ՐՈՊԵ

1. Ձեզ համոզո՞ւմ է միստր Գրոգանի մահը: Ինչո՞ւ:

2. Ինչպե՞ս կմեկնաբանեք հետևյալ պատկերը.

...Նրա ձեռքը անփութորեն դիպավ խաշած ձվին, որ պահում էր որպես երջանկության նշան: Չիմանալով, թե ինչ է անում, նա ձուն խփեց սեղանին, ջարդեց, ապա դանդաղ կեղևեց և հուսահատ ինքնամոռացության մեջ կերավ: Հանկարծ սեղանի վրա նկատեց ձվի կեղևները և դրանք

3. 26-րդ, 33-րդ գլուխների ո՞ր հատվածների հետ կհամեմատեք այս հատվածը.

- Ես գիտեմ, որ թշնամին ժողովուրդը չէ,- ասաց նա,- եթե այդպես լիներ, ինքս իմ թշնամին կլինեի: Ժողովուրդը ամեն տեղ նույնն է: Եթե մեկը մյուսին սպի, նշանակում է՝ ինքն իրեն է սպում: Մարդը չի կարող ուրիշներին սպել, որովհետև ուրիշին սպողը ինքն իրեն է սպում...

4. Մեկնաբանեք այս հատվածը.

- Չգիտեմ ինչպես,- ասաց Սփանգլերը,- բայց հավատում եմ, որ նա կմնա: Գուցե նա կմնա ք ո մեջ, ք ո փոքր եղբոր Յուլիսիի մեջ: Գուցե նա կմնա այն սիրո մեջ, որ դուք կզգում եք նրա նկատմամբ...

Դու պիտի նրան զգաս այն ամենի մեջ, որ ծնված է սիրուց և սիրո համար...

5. Այս մտքի մեկ այլ ձևակերպում գտեք 4-րդ գլխում.

- Քեզ մխիթարել չեմ փորձի,- ասաց Սփանգլերը,- գիտեմ, որ չեմ կարող: Բայց հիշիր, որ լավ մարդը երբեք չի մահանում...

6. *Մարդու մարմինը կարող է մեկնիկ հետանալ, նրան կարող են մեկնիկ խլել, բայց այն լավազունը, որ կա մարդու մեջ, մնում է հավիտյան...*

Գտեք համարժեք մտքեր 4-րդ, 7-րդ գլուխներում:

7. *Սերը անմահ է, և նա ամեն ինչ հավերժական է դարձնում, իսկ ատելությունը ամեն ինչ ոչնչացնում է:*

ա) Համամի՞տ եք այս մտքի հետ:

բ) Գտեք նույն մտքի այլ ձևակերպում 18-րդ գլխում:

Տնային հանձնարարություն. Կարդացեք Վ. Սարոյանի «Իսպանիայի պատերազմը» և քննարկեք դասարանում:

Գլուխ 39

ՎԱԽՃԱՆՆ ՈՒ ՍԿԻԶԲԸ

1. Մեկնաբանեք հետևյալ հատվածը.

...Դու ապաստում ես, որ նրա այն մասը, որ մահկանացու է, ք ո մեջ նույնպես մահանա, այն մասը, որը միայն միս է և արյուն, այն մասը, որ զալիս է ու գնում: Դա հիմա քեզ ցավ է պատճառում, բայց մի փոքր էլ համբերիր: Երբ այդ ցավը մահանա և հետանա քեզնից, մնացած մասը ավելի թեթև ու ավելի ապնիվ կդառնա, քան երբևէ եղել է: Մի քիչ ժամանակ պետք է անցնի, բայց քանի դեռ ապրում ես, միշտ անհրաժեշտ է, որ մի քիչ ժամանակ անցնի, միշտ մի քիչ, և ժամանակի ամեն մի անցումը քեզ մի քիչ ավելի պիտի մոտեցնի այն ապնվազունին, որ ապրում է բոլորիս մեջ: Համբերիր, տուն կգնաս թեթևացած հոգով, առանց ք ո մեջ մահը կրելու: Ժամանակ տուր, որ մահը հետանա քեզնից:

2. Չեք համոզում է հետևյալ պատկերը.

...Գլխավոր մուտքի աստիճանների վրա նստած երիտասարդ պինվորը, այն տղան, որ տուն էր վերադարձել, եկել էր մի բաղար, որը երբեք չէր տեսել, մի տուն, որտեղ երբեք չէր մտել, եկել էր մի ընտանիք, որին երբեք չէր հանդիպել: Թվում էր, թե պատահական անցորդ էր նա, և, այնուամենայնիվ, նա տուն էր եկել: Թեթաբան նրա ծննդավայրն էր: Եկել էր այն տունը, որտեղ ինքը ծնվել էր: Եկել էր իր հարազատ ընտանիքի գիրկը...

3. Բարձրաձայն կարդացեք Մարկուսի և Թորի Ջորջի զրույցը: (Գլուխ 32):

4. Ինչո՞ւ էր Թորի Ջորջը ասում, որ Մարկուսը չի մահացել:

5. Ձեզ համոզո՞ւմ է այն ընդունելությունը, որը ցույց տրվեց Թորի Ջորջին:

6. Քննարկեք հատվածը.

Մայրը կանգնած նայում էր ու ժպտում ողջ մնացած իր երկու որդիներին, որ կանգնել էին անծանոթ պինվորի կողքին, այն պինվորի, որ ճանաչել էր իր մյուս որդուն, որն այժմ մեռած էր: Նա ժպտաց հենց պինվորին. չէ՞ որ նա դարձել էր հիմա իր որդին...

7. Ինչո՞ւ է գլուխը վերնագրված «Վախճանն ու սկիզբը»:

8. Ինչպե՞ս կվերնագրեք դուք:

9. Ինչո՞վ եք բացատրում *լույս* բառի կրկնակ գործածությունը.

Զինվորն ու իր եղբայրները առաջացան դեպի դուռը, դեպի լույսը, դեպի հարուստ օջախի ջերմությունը, տան ջերմությունն ու լույսը:

ԱՄՓՈՓՈՒՄ

1. Բնութագրեք

ա) Յուլիսիսին,

բ) Հոմերին,

գ) Մարկուսին,

դ) միսիս Մաքոլիին:

Ի՞նչ ընդհանրություն կա այս կերպարների միջև:

Ձեր ճանաչած ո՞ր հերոսներն ունեն ընդհանրություն այս կերպարների հետ:

2. Ո՞րն է միստր Մաքոլիի կերպարի անհրաժեշտությունը վիպակում:

3. Գտեք բնության պատկերները վիպակում: Ինչո՞ւ են նրանք բիչ, ձեր կարծիքով:

4. Ցույց տվեք դրվագներ, որոնցից երևում է, որ վիպակում ներկայացված է ամերիկյան միջավայր:

5. Ինչո՞ւ է վիպակը կոչվում «Մարդկային կատակերգություն»:

6. Ի՞նչ տվեց ձեզ վիպակը:

7. Վիպակի ո՞ր հերոսին կուզեք ունենալ ձեր կողքին: Ինչո՞ւ:

8. Գրեք նամակ վիպակի հերոսին: